

Հ Ր Ա Մ Ա Ն N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«11» ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**ԳԵՈՐԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Աբրահամյանի 2016 թվականի համաձայնությունը և Գ. Խաչատրյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Գեորգի Խաչատրյանին տրամադրել 2015 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդից չօգտագործված 6 աշխատանքային օր՝ 2016 թվականի փետրվարի 12-ից 19-ը ներառյալ:

2. Գ. Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների ժամանակավոր կատարումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ֆինանսական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Մարինա Գևորգյանին:



ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ